ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

т. XXV, № 1, 1972

ԼՐԱՏՈՒ

# ՊՐՈՏՈԶՈՈԼՈԳՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

*1971 թ. հոկտեմբերի 12—15-ը Բաքվում տեղի ունեցավ Պրոտոզոոլոգների համամիութենական ընկերության առաջին համագումարը՝ նվիրված նախակենդանիների ուսումնասիրության արդիական հարցերին։ Ինչպես հայտնի է, նախակենդանիները ուրույն տեղ են զբաղեցնում կենդանական աշխարհում։ Լինելով միաբջիջ, նրանք ի վիճակի են իրագործել բազմաբջիջ օրգանիզմների ֆունկցիաները և ունենալով բջջային մակարդակի կառուցվածք, օգնում են բացահայտել բջջի էվոլյուցիոն հնարավորությունները և նրա ֆիզիոլոգիական փոփոխությունների ուղիները։ Այդ պատճառով էլ զգալի տեսական և գործնական հետաքրքրություն են առաջացնում գիտական աշխարհում։ Պատահական չէ, որ գենետիկները, բիոքիմիկները, բիոֆիզիկները և ընդհանրապես կենսաբաններն ավելի ու ավելի հաճախ են օգտագործում վերջիններիս, որպես փորձնական հետազոտությունների օբյեկտ։ Նրանց մակաբուծ ներկայացուցիչներից շատերը հանդիսանում են մարդու, ընտանի կենդանիների, ձկների և օգտակար միջատների մի շարք ծանր հիվանդությունների հարուցիչներ։ Մեծ է նրանց դերը ջրի ինքնամաքրման ու երկրագնդի հողաշերտի կազմավորման պրոցեսում։ Նրանք կեր են ծառայում ձկների և այլ ջրային կենդանիների համար։ Նախակենդանիներին կարելի է նաև օգտագործել որպես կենսաբանական պայքարի միջոց, գյուղատնտեսական կուլտուրաների վնասատուների դեմ։ Հետևաբար, պատահական չէ, որ նախակենդանիների ուսումնասիրությամբ զբաղվել և զբաղվում են տարբեր մասնագետներ։*

*Այդ է պատճառը, որ 1966 թ. Լենինգրադի մի խումբ գիտնականներ պրոֆ. Յ. Ի. Պոլյանսկու գլխավորությամբ, առաջարկեցին ստեղծել Պրոտոզոոլոգների ընկերություն, որը գործնական կապեր ու կոնտակտներ ստեղծելով կմիացնի տարբեր բնագավառներում գործող պրոտոզոոլոգների ջանքերը բազմաթիվ պրոբլեմներ լուծելու նպատակով։*

*Միութենական ԳԱ ընդառաջեց այդ նախաձեռնությանը և ստեղծեց պրոտոզոոլոգների ընկերության կազմակերպչական կոմիտե։ 1968 թ. կայացավ կազմակերպչական համագումարը։ Այժմ Պրոտոզոոլոգների ընկերությունը ունի 13 բաժանմունք, միութենական հանրապետություններում, այդ թվում նաև հայկական բաժանմունք։*

*Համագումարը նշեց ընկերության դրական դերը պրոտոզոոլոգիայի զարգացման բնագավառում, ինչպես մեզ մոտ, այնպես էլ ամբողջ աշխարհում։ Նրա բաժանմունքներում լսվեցին 203 զեկուցումներ՝ 66-ը՝ ընդհանուր, 52-ը՝ բժշկական, 70-ը՝ անասնաբուժական, 15-ը՝ ձկների և անողնաշարավորների պրոտոզոոլոգների գծով։ Համագումարի մասնակիցները մեծ ուշադրությամբ ունկնդրեցին պրոֆ. Յ. Ի. Պոլյանսկու ելույթը՝ նվիրված մեր երկրում պրոտոզոոլոգիայի զարգացման հեռանկարներին, ՍՍՀՄ ԲԳԱ թղթակից-անդամ*

Շ. Դ. Մոշկովսկու զեկուցումը իմունոլոգիայի վերաբերյալ, պրոֆ. Զասուխինի ելույթը «Պրոտոզոոլոգիայի պրոբլեմները և Ի. Ի. Մեչնիկովը» թեմայով և այլ զեկուցումներ։

Ց. Ի. Պոլյանսկին, հույս հայտնեց, որ համագումարը խթան կհանդիսանա պրոտոզոոլոգիայի հետագա զարգացման համար և հնարավորություն կստեղծի մեր գիտնականներին ավելի լավ պատրաստվելու Ֆրանսիայում 1973 թ. կայանալիք չորրորդ միջազգային կոնգրեսին։

Վ. Հ. ԽԱՉՈՅԱՆ